

**Theoretical value of the research.**

The theoretical value of the research is the evaluation of the pedagogical legacy of Vazgen I from a new angle relating it to historical events.

We have tried to represent the difficulties that Armenian teachers encountered both in Diaspora and in Motherland. We have attached due importance to theological, religious, educational issues that ecclesiastical pedagogs facted during a time when atheistic ideology prevailed.

We have also highlighted the patriotic role of Vazgen I in teaching and educating a generation. The study of diverse pedagogical activities of Vazgen I has helped us to have a clear idea about the content of teaching and education of his time and about the peculiarities of education management both in Diaspora and Armenia.

**The practical value of the research.**

The practical value of the research is that the history of pedagogical thought has been enriched with one more prominent pedagogue Vazgen I Catholicos of All Armenians. The present work can be included in the list of books recommended for the academic course "History of Armenian Pedagogy".

**The approbation of the research.**

The work has been discussed at the scientific seminars at the YSU Chair of Pedagogy. The completed version of the thesis has been discussed at the session of the chair. Six articles have been published on the given subject.

**Structure and volume of the work.**

The thesis consists of introduction, four chapters, conclusion, bibliography, detailed appendices. The thesis contains 36 pictures, 9 charts.



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՎԱԶԳԵՆ ԱՌԱԶԻՆԸ ՄԱՆԿԱԿԱՐԺ

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

LUSINE KH. HAYRAPETYAN

CATHOLICOS OF ALL ARMENIANS VAZGEN I AS A PEDAGOG

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Կ. Հարությունյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Օ. Թովուզյան
	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Վ. Հովհաննիսյան
Առաջատար կազմակերպություն՝	Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Pedagogical sciences candidate thesis on the specialty 13.00.01 - "Theory and history of pedagogics".

The defense of the dissertation will be held at 14:00, on November 28, 2014, at Yerevan State University (address: 0025, Abovyan str. 52a, Yerevan, YSU, Faculty of Armenian Philology, room N 203)

SUMMARY

Actuality of the work.

The 20-th century which sometimes is referred to as the spiritual rebirth of the Armenian nation, regaining of its statehood and building of an independent country has provided us with an exclusive opportunity to reveal and revalue the role of the Armenian Apostolic Church and basically the unique role of Catholicos of All Armenians Vazgen I and pedagogical activity whose primary mission was preservation of Armenian national identity and national values. Vazgen I has been greatly appreciated for his all-embracing and efficient activities in a variety of spheres.

Scientific novelty of the research.

In our research we have tried to reveal and represent all the vectors of pedagogical activities of Vazgen I. The research covers the study of secular and spiritual periods of his pedagogical activities, his approaches to teaching and educational issues. The consideration of his pedagogical ideas, attitudes in the philosophical, psychological and social publications are at the core of our research.

The research has been the first attempt to carry out a comprehensive study of a series of educational programmes put forward by Vazgen I that aimed at improving the content of education of Gevorgyan Theological seminary. To accomplish the research we have studied extensive data, different sources and archival documents that have been used for the first time and have helped us to reveal the indispensable role of Vazgen I as a pedagog.

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. նոյեմբերի 28-ին, ժամը 14<sup>00</sup>-ին, ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի մանկավարժության 065 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք.Երևան, Աբովյան 52ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 203 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. հոկտեմբերի 28-ին:

Մանկավարժության 065 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ա. Փ. Ղազարյան

## ԱՄԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

диссертации и является глубокое и всестороннее исследование и анализ вышеизложенного.

В особенности, нами впервые проведен всесторонний анализ ряда учебных программ и учебников, составленных Католикомосом с целью улучшения содержания образования в духовной семинарии Геворкян.

В отношении педагогической деятельности, взглядов, психолого-педагогических подходов, ценных заслуг в учительской деятельности Католикомоса нами был исследован богатый фактографический материал, первоисточники, архивные материалы, документы, которые были использованы впервые и помогли нам открыть Католикомоса Всех Армян Вазгена Первого как педагога.

**Теоретическая значимость исследования** определяется тем обстоятельством, что в свете истории новейшего времени по новому оцениваются и представляются педагогические взгляды Католикомоса. В данном контексте особую важность приобретают анализ деятельности армянского педагога в действующих школах диаспоры, препятствия, трудности, а также обращение священнослужителя-педагога в своей деятельности на Родине к проблемам богословского, религиозного воспитания, имеющим национально-охранительную роль и значение в деле образования и воспитания поколений в условиях атеистической идеологии.

Исследование многообразной педагогической деятельности Католикомоса позволило составить ясное представление о содержании воспитания и обучения того времени, о формах организации образования как в диаспоре, так и на Родине.

**Практическая значимость исследования** обусловлена тем обстоятельством, что история армянской педагогической мысли обогатится еще одним достойным обликом педагога.

Материалы диссертации могут быть использованы при чтении курса «История армянской педагогики» в высших учебных заведениях .

**Апробация.** Результаты и выводы исследования обсуждались на научно-теоретических семинарах кафедры педагогики ЕГУ, а работа в целом – на заседании кафедры. По теме диссертации опубликовано 6 статей.

**Структура и объем диссертации.** Диссертация состоит из введения, 4-х глав, заключения, списка использованной литературы, объемных приложений. Текст диссертации включает 36 фотографий, 9 графических схем.

### Թեմայի արդիականությունը

Հայ ժողովրդի պատմության մեջ 19-րդ դարի երկրորդ և 20-րդ դարի առաջին տասնամյակներն արձանագրեցին արևմտյան հատվածում իրականացված թուրքական հայաջինջ և եղեռնագործ ժամանակներ, որոնք լեցուն էին հայ մտավորականների, վառ անհատականությունների կորուստների անթվարկելի հիշատակություններով, նաև՝ մազապուրծ եղած հայերի աշխարհասփյուռ շահավիղցներով, ովքեր օտար ափերում փորձեցին հառնել փյունիկի պես, կերտել հայրենիքի նոր տեսլականը:

Հայերի հանդեպ բնաջինջ քաղաքականությունը, ցավոք, շարունակվում էր նաև Մայր Հայաստանում՝ ստալինյան անհատապաշտության ընթացքում՝ ստանալով աքսորի, գաղափարական բռնությունների, գաղափարախոսական անազատությունների տեսք:

Հայաստանը երկփեղկված էր: Նրան միավորողը վիշտն էր, պետականության կորուստը, ցավագին անկումը:

Որքան էլ զարմանալի թվա, այս խառնակ ժամանակների մեջ ծնվեցին հարատևման հույս դարձած անհատականություններ, որոնց շնորհիվ հայ ժողովուրդը, թեև՝ կիսված հողով, ամբողջական մնաց իր անպարտելիության հավատի մեջ:

Նման հուսաբեր ծնունդներից էր հեռավոր Ռումինիայի Բուխարեստ քաղաքում լույս աշխարհ եկած Լևոն-Կարապետ Պալճյանը, հետագայում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը, որի հարուստ ու բեղմնավոր հասարակական-կրթամշակութային գործունեության ընթացքը սկսվեց Ռումինիայի հայկական գաղթօջախում ազգապահպան ծրագրեր իրականացնելով, շարունակվեց հայրենիքում՝ հոգևոր վերելքի բարձունքներ նվաճած, ամփոփվեց հայ ժողովրդի վերագարթոնքի ժամանակաշրջանով՝ դառնալով գալիք սերունդների համար հայրենասիրության օրինակ ու կերպ: Նա սերնդակիցն էր թուրքական հայահալած քաղաքականության բնաջինջ ժամանակների, ժառանգն էր արյունոտ յաթաղանից մազապուրծ եղած հայ ընտանիքի, որդին էր վշտակիր ժողովրդի, որը ծանր ժամանակներ էր հաղթահարում՝ իր ապագայի վառ տեսիլքները սերունդներին կտակելով: Վեհափառ Հայրապետի ծավալած բազմասպարեզ գործունեության բոլոր ոլորտներում ևս ասելիքը միտված եղավ գալիք սերունդներին:

Մեր օրերում, երբ ազգային հոգևոր վերագարթոնքի, պետականության վերականգման, ազատ և անկախ երկիր կերտելու ժամանակները պատմության ոչ վաղ անցյալի էջերը թերթելու ինքնաճանաչման բացառիկ հնարավորություն են ստեղծել, կարիք կա նորովի վերարժևորելու և բացահայտելու դժվարին ժամանակներում հայապահանության առաքելություն ունեցող ազգային եկեղեցու, նրա բարձրաստիճան սպասավորի՝ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին

Սուրբ Օծություն, Տեր, Տեր Վազգեն Առաջինի բազմասպարեզ գործունեության բնագավառները:

Մեր ուշադրությունը հատկապես կանգ է առել Լուսավորչի գահի 130-րդ գահակալի գործունեության մեկ բնագավառի՝ մանկավարժականի վրա, որի վերլուծությունը նոր լույսի տակ է ներկայացնում Վեհափառ Հայրապետին:

Անշուշտ, Վազգեն Առաջինը ոչ միայն աստվածընկալ հայրապետ էր, այլև խորաթափանց ու հմուտ քաղաքագետ, հեռատես հոգեբան, բարձրաճաշակ արվեստասեր, փիլիսոփա-գրականագետ: Նրա շինարարական գործունեությունը վեր հանող կառույցների անմահ զեղեցկության մեջ գալիքի համար պահ էր տալիս հայոց պատմության բանկազին էջեր, քարոզներում, ելույթներում, առավելապես կոնդակներում տարփողում էր սերն առ հայ առաքելական եկեղեցին, հայոց պատմությունը, ոսկեդարիկ մայրենին՝ շրջանցելով հայրենի երկրում գաղափարախոսական «երկաթե վարագույրի» պատնեշը և հասնելով անկախ Հայաստանի երազանքն իրականություն դարձրած մերօրյա երիտասարդ սերնդին:

Իր կերպարի մեջ նա կարողացավ հաշտեցնել իրարամերժ ժամանակներ՝ գործունեության բոլոր ձևերի մեջ թողնելով ճշմարիտ հայրենասիրության լուսե հետազիծ՝ հոգևոր, մշակութային, շինարարական, միջեկեղեցական հարաբերությունների կարգավորման, խաղաղության պաշտպանության ասպարեզներում: Սակայն Վեհափառի կերպարը թերի կլիներ առանց նրա մանկավարժական գործունեության աշխարհիկ և հոգևոր շրջանների անդրադարձի:

Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի մանկավարժական գործունեության ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատելու, որ մեր ժամանակների իդեալի որոնումը՝ որպես ՀՀ առաջին Ազգային հերոսի՝ հանձին Վեհափառ Հոր՝ կանգ է առել դարձյալ Ուսուցչի վրա, այնպես, ինչպես մաշտոցյան շրջանում էր: Մեսրոպ Մաշտոցի նման նա նույնպես խորությամբ հասկացել էր իր ժամանակի խնդիրը և լուծել այն:

Հարստացնելով մանկավարժության պատմությունը հայրենաշեն կաթողիկոսի մանկավարժական գործունեության ուսումնասիրությամբ՝ կարևոր ենք համարում հայ մանկավարժական մտքի անմահ կերպարների կողքին ավելացնել ևս մի կոթողային դիմանկար, ով կներշնչի ներկա և գալիք սերունդներին հայրենասիրություն և կուղենշի ազգամեր ընթացք՝ ի փառս հայ ժողովրդի հարատև գոյապահպանման:

### **Հետազոտության նպատակը**

Հետազոտության նպատակն է՝

▪ ուսումնասիրել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի թե՛ աշխարհիկ, և թե՛ հոգևոր շրջանի մանկավարժական գործունեությունը, ներկայացնել նրա տեսակետներն ուսուցման և դաստիարակության գործընթացների մասին,

## **ԱՐԱՔԵՅԱՆ ԼՍՍԻՆԵ ԽԱՇԱՏՈՐՈՎՆԱ**

### **КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН ВАЗГЕН ПЕРВЫЙ ПЕДАГОГ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01. “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 28-го ноября 2014 года в 14<sup>00</sup> на заседании действующего в ЕГУ 065 специализированного совета по педагогике при ВАК. Адрес: 0025, г. Ереван, улица Абовяна 52<sup>а</sup>, корпус факультета армянской филологии ЕГУ, 203 аудитория.

### **Р Е З Ю М Е**

#### **Актуальность работы.**

Времена национального духовного подъема, восстановления государственности, создания свободной и независимой страны в 20-ом веке дали нам исключительную возможность перелистать страницы не далекого исторического прошлого, по новому переоценить и выявить деятельность национальной церкви, имеющей миссию сохранения армянства в трудные времена, и ее высокопоставленного слуги - Патриарха Всех Армян и Католикоса Вазгена Первого.

Мы уделили особое внимание одной области многообразной деятельности 130-го главы престола Просветителя – педагогической, анализ которой в новом свете открывает нам Патриарха.

Исследование мирского и духовного этапов педагогической деятельности Католикоса Всех Армян Вазгена Первого, его взгляды и подходы о воспитании и обучении, анализ педагогических взглядов в научно-философских, психологических, публицистических материалах Патриарха, его деятельность по созданию учебников представляют Католикоса, занимающегося педагогической деятельностью с 19 лет до конца его земной жизни, как педагога, обосновывают современность его богатого педагогического наследия.

#### **Новизна исследования.**

О Вазгене Первом имеется много трудов, авторы которых частично отмечали его общественный, научный, культурный вклад, обращались к его педагогической деятельности. Нами обстоятельно и всесторонне исследованы взгляды и подходы Католикоса к обучению и воспитанию, проанализированы педагогические взгляды Патриарха в его научно-философских, психологических, публицистических материалах. Новизной

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝**

1. **Հայրապետյան Լ.,** Լևոն-Կարապետ Պալճյանի մանկավարժական գործունեությունը ռումինահայ գաղութի ազգային վարժարանում, «Մանկավարժություն» հանդես (ՀՀ ԿԳՆ Ազգային ինստիտուտ), 2012, 8, էջ 46-52:
2. **Հայրապետյան Լ.,** Լևոն-Կարապետ Պալճյանի մանկավարժական մտքերը «Հերկ» հանդեսում, «Մանկավարժական միտք» հանդես, 2012, 3-4, էջ 192-200:
3. **Հարությունյան Ն., Հայրապետյան Լ.,** Մայրենի լեզվի ուսուցման հարցերը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի աշխատություններում, «Մանկավարժական միտք» հանդես, 2013, 1-2, էջ 234-244:
4. **Հայրապետյան Լ.,** Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Առաջինը ուսուցման հոգեբանա-մանկավարժական հիմքերի մասին, «Մանկավարժական միտք» հանդես, 2014, 1-2, էջ 269-277:
5. **Հայրապետյան Լ.,** Պաստիարակության հարցերն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի աշխատություններում, «Մանկավարժական միտք» հանդես, 2014, 3-4, էջ 233-239:
6. **Հայրապետյան Լ.,** Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի ազգապահպան գործունեությունը Հայաստանում/1988-1994թթ-ին/, «Կրթությունը և գիտությունը Արցախում» գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական, 2014, 1-2, էջ 162-168:

▪ բազմաբնույթ և համակողմանի կերպով բացահայտել նրա դերն ու տեղը հայ մանկավարժական մտքի պատմության մեջ:

**Հետազոտության օբյեկտը**

Հետազոտության օբյեկտն Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մանկավարժական գործունեությունն է:

**Հետազոտության առարկան**

Հետազոտության առարկան Վեհափառ Վազգեն Առաջինի կրթական, դաստիարակչական, ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսուցման բովանդակության բարելավմանն ուղղված մանկավարժական մոտեցումներն են:

**Հետազոտության վարկածը**

Վազգեն Առաջինի մանկավարժական մոտեցումները կստանան արդիական հնչեղություն, եթե՝

- Վեհափառի մանկավարժական գործունեությունը ենթարկվի համակողմանի վերլուծության,
- նորովի արժևորվեն մանկավարժ-վեհափառի դիպակտիկական և դաստիարակչական մտքերը,
- ներկայացվեն նրա դասագրքաստեղծ գործունեության գիտական հիմքերը, աստվածաբանական առարկաների ուսուցման բովանդակությունը բարեփոխող ծրագրերը:

**Հետազոտության խնդիրները**

1. Համառոտ ակնարկով ներկայացնել 19-րդ դարի երկրորդ և 20-րդ դարի առաջին կեսերին ռումինահայ գաղութի վիճակը, թեմի կազմակերպման և պահպանման գործում եղած դժվարություններն ու ձեռքբերումները, դրանց նշանակությունը Կ. Պալճյանի կյանքում:
2. Ուսումնասիրել Վեհափառ հայրապետի հարուստ կենսագրության կարևոր դրվագները, հասարակական, մշակութային-ազգապահպան գործունեությունը:
3. Ներկայացնել նրա աշխարհիկ և հոգևոր մանկավարժական գործունեության հիմնական կողմնորոշումներն ու մոտեցումները:
4. Ուսումնասիրել Ռումինիայի հայկական գաղթօջախում ապագա Վեհափառի՝ Լևոն-Կարապետ Պալճյանի մանկավարժական գործունեությունը:
5. Հետազոտել Վեհափառի մանկավարժական մոտեցումները նրա հրապարակախոսության մեջ:
6. Ներկայացնել և մեկնաբանել Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Հայրապետի դասախոսական գործունեությունը Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում:

7. Ներկայացնել ու գնահատել Վեհափառի կողմից մշակված ուսումնական ծրագրերն ու դասագրքերը:

8. Վերլուծել Վեհափառի դիդակտիկական հայացքները, վեր հանել հոգեբանա-մանկավարժական հիմքերը:

9. Բացահայտել Վեհափառի արժեքավոր մտքերն անձի ձևավորման մասին:

10. Վերլուծել Վեհափառ հայրապետի տեսակետները դաստիարակության նպատակի, խնդիրների, իրականացման ձևերի, բովանդակության մասին:

11. Բացահայտել Վեհափառի կենսագործունեության կարևոր նշանակությունը հայ ժողովրդի կյանքում, նրա կրթադաստիարակչական արժեքավոր ու հիմնարար գաղափարների և առաջավոր տեսակետների դերն ազգային դպրոցի պատմության մեջ:

12. Արժևորել Վազգեն Առաջինի դերը 20-րդ դարի հայ մանկավարժության պատմության մեջ:

### **Ատենախոսության գիտական նորույթ**

▪ Վազգեն Առաջին Կաթողիկոսի մասին կան շատ աշխատություններ, որոնց հեղինակները կարևորել են Նորին Սրբության հասարակական, գիտական, մշակութային ներդրումը, անդրադարձել են նրա մանկավարժական գործունեությանը: Սակայն առավել հանգամանալից ու համապարփակ ուսումնասիրված չեն Վեհափառի տեսակետներն ու մոտեցումներն ուսուցման և դաստիարակության մասին, վերլուծված չեն Վեհափառի գիտափիլիսոփայական, հոգեբանական և հրապարակախոսական նյութերում մանկավարժական հայացքները: Ատենախոսության նորույթի առանցքում են հիշյալ հարցերի խորաքննիչ ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

▪ Հատկապես առաջին անգամ մեր կողմից իրականացվել է Վեհափառի՝ Գևորգյան հոգևոր ճեմարանի կրթության բովանդակության բարելավման նպատակով կազմած մի շարք ուսումնական ծրագրերի և դասագրքերի համակողմանի վերլուծություն:

▪ Վեհափառի մանկավարժական գործունեության, տեսակետների, հոգեբանա-մանկավարժական մոտեցումների, ուսուցչական գործունեության արժեքավոր վաստակի վերաբերյալ մեր կողմից ուսումնասիրվել է հարուստ փաստագրական նյութ, սկզբնաղբյուրներ, արխիվային նյութեր, վավերագրեր, որոնք առաջին անգամ են դրվել շրջանառության մեջ և որոնք օգնել են բացահայտելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին իբրև մանկավարժ:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հանգամանորեն ուսումնասիրելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մանկավարժական գործունեությունն ու հայացքները, եկել ենք հետևյալ եզրակացություններին.

1.19-րդ դարի երկրորդ և 20-րդ դարի առաջին կեսերին ռումինահայ գաղութի ոչ միայն գոյապահպանման ու հայապահպանման, այլ նաև տեղի հայկական դպրոցներում կրթական գործի կազմակերպման հարցերում մեծ դերակատարություն ունեցավ Լևոն-Կարապետ Պալճյանը՝ նույն ինքը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը:

2. Վեհափառի մանկավարժական մոտեցումները հրապարակախոսության մեջ նրան ներկայացնում են իբրև գիտական պրպտուն միտք ունեցող մանկավարժ-հրապարակախոսի:

3. Ամենայն Հայոց Կաթողիկոսի աշխարհիկ և հոգևոր մանկավարժական գործունեության հիմնական կողմնորոշումներն ու մոտեցումները, տեսակետներն ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսուցման սկզբունքների և մեթոդների, ուսուցչի-աշակերտ/դասախոս-ուսանող/փոխհարաբերությունների և ուսուցչի/դասախոսին/ ներկայացվող անձնային և մասնագիտական որակների մասին արդիական են նաև այսօր:

4. Վազգեն Առաջինի՝ դաստիարակության բովանդակության, սկզբունքների և մեթոդների մասին մտքերը, երեխայի վարքագիծը կառավարելու ձևերի մասին տեսակետներն առաջադիմական են և ունեն կիրառելի բնույթ:

5. Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսուցչապետության և դասախոսական աշխատանքների ընթացքում նրա կողմից բարելավվեց կրթության բովանդակությունը՝ ավելացնելով աստվածաբանական մի շարք առարկաներ: Նրա հեղինակած հոգեբանության դասագիրքը, քարոզխոսության և տրամաբանության դասընթացների ուսումնական ծրագրերը դեռևս չեն կորցրել իրենց գիտական նշանակությունը:

6. Վեհափառն աստվածաբանական, հոգեբանական, մանկավարժական, կենսաբանական տեսանկյուններից համակողմանիորեն է ներկայացրել մարդու անձի ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնները:

7. Նորին Սրբության մանկավարժական գործունեությունը դժվարին ժամանակներում ծառայեց ազգապահպանության գործին՝ ուսուցման և դաստիարակության կազմակերպման հարցերում հենվելով ազգային, հոգևորի պահպանման ու տարածման վրա:

8. Վեհափառ Հայրապետի կենսագործունեության նշանակությունը հայ ժողովրդի կյանքում կարևորվեց ոչ միայն Հայրապետական մեծ գործունեության, այլև ազգային դպրոց ունենալու համար կրթադաստիարակչական արժեքավոր ու հիմնարար գաղափարների ներմուծման տեսանկյունից:

**«Ղաստիարակության հարցերը Ամենայն Չայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի աշխատություններում»:** Այն քննում է Վեհափառի տեսակետները դաստիարակության բովանդակության տարբեր բաղադրիչների մասին:


Երկրորդ ենթագլխում ամբողջական վերլուծված են ընտանեկան, սեռային, սեռական, աշխատանքային, ֆիզիկական, իրավական, առողջապահական, տնտեսագիտական, գեղագիտական դաստիարակությանն ուղղված Վեհափառի տեսանկյուններն ու մոտեցումները, հատկապես մեծ շեշտադրում է արված Վեհափառի կողմից դաստիարակության մի քանի մեթոդների կիրառությունների վրա, որոնցից է հատկապես անձնական օրինակի մեթոդը:

Իհարկե թե՛ ուսուցումը, թե՛ դաստիարակությունը երկկողմանի գործընթացներ են, որտեղ Վեհափառը կարևորում էր համագործակցող սուբյեկտների փոխկապակցված աշխատանքը: Արժևորվել են Վեհափառի տեսակետներն ուսուցչի անձնային, մասնագիտական որակների մասին, որին էլ նվիրված է ատենախոսության չորրորդ գլխի վերջին՝ **երրորդ ենթագլուխը՝ «Ուսուցչի նկարագիրն ըստ Ամենայն Չայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի»:**

Այս ենթագլխում ներկայացվել են Վեհափառի մտքերն երեխայի անձի ձևավորման վրա իրենց առաքելությանը անփոխարինելի և մեծ ազդեցություն ունեցած մանկավարժների մասին:

Վազգեն Առաջինի կողմից ուսուցչին ներկայացվող պահանջներն արտացոլված են գծապատկեր 7-ում:

**ԳՃ. 7 Ուսուցչին ներկայացվող պահանջներն ըստ Վեհափառ Վազգեն Առաջինի**



**Հետազոտության մեթոդաբանական հիմքերը**

Հետազոտության համար որպես մեթոդաբանական հիմք են ծառայել հումանսիտական հոգեբանության և մանկավարժության սկզբունքները /Կ. Ռոջերս, Ա. Թոփուլզյան/, ուսուցման և դաստիարակության դիալեկտիկական կողմերը բացահայտող հոգեբանա-մանկավարժական հիմքերը /Ա.Բահաթյան, Ա. Նալչաջյան, Յ. Թութունջյան, Ս. Գոլանջյան, Եղիզարյան Վ./, ուսուցման կազմակերպման հայեցակարգներն ու մոտեցումները /Ջ. Դյուլի, Գ. Էդիլյան, Ս. Մանդինյան, Ղ. Աղայան/, դաստիարակության փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական կողմերը ներկայացնող մոտեցումները /Մ. Խրիմյան, Ա. Շավարշյան, Ն. Հարությունյան, Կոլբերգ/, հայ և համաշխարհային աստվածաբանական-փիլիսոփայական մտքի աղբյուրները /Գարեգին Ա Սարգսյան, Գևորգ Զ Զորեքչյան/, անձի ձևավորման և զարգացման մասին տեսությունները /Ժ.Ժ. Ռուսո, Ջ. Լոկ, Ջ. Դյուլի, Նիցշե, Գր. Տաթևազի, Յ. Որոտնեցի/, անձի վարքաբանական, մանկավարժա-հոգեբանական ախտորոշման հիմքերը /Յ. Ոսկեբերան, Ջ. Դյուլի, Վ. Կրուտեցկի, Ա. Նալչաջյան, Ի. Քոչարյան, Ա. Դալլաքյան/:

**Պաշտպանության են ներկայացվել հետևյալ դրույթները**

1. Վեհափառ հայրապետն անուրանալի ծառայություն է մատուցել ոչ միայն հայ առաքելական եկեղեցու ազգապահպան հիմքերն անթեք ու անխառն պահելու գործում, այլև ծավալել է մանկավարժական հարուստ գործունեություն, որն ուղղված է եղել ազգային արժեքներով սերունդ կրթելու և դաստիարակելու ազնիվ գործին:
2. Վազգեն Առաջինի հայացքներն առաջադիմական բնույթ են կրել իր մանկավարժական գործունեության թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր շրջանում:
3. Կարապետ Պալճյանի մանկավարժական գործունեությունը մեծ հետք է թողել Ռումինիայի հայկական գաղթաբնակչության «Միասնյան-Քեսիմյան» ազգային վարժարանի կրթադաստիարակաչական աշխատանքները կազմակերպելիս:
4. Վեհափառի մանկավարժական մոտեցումները նրա իրապարակախոսության մեջ դրսևորվել են որպես առաջադեմ մանկավարժ-գիտնականի տեսակետներ:
5. Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոսի՝ Ամենայն Չայոց Չայրապետ Վազգեն Առաջինի ջանքերով իրականացվել են լուրջ բարեփոխումներ կրթօջախի կրթության բովանդակության և ուսուցման կազմակերպման հարցերում:
6. Վեհափառի կողմից մշակված ուսումնական ծրագրերը /հոգեբանություն, տրամաբանություն, քարոզխոսություն/ արժեքավոր գիտակրթական ներդրում են համարվում նաև մեր օրերում:

7. Վեհափառի դիդակտիկական հայացքները հիմնված են հոգեբանա-մանկավարժական հիմքերի վրա, որը և բարձրացնում է դրանց գիտական արժեքը:

8. Վեհափառ հայրապետի տեսակետները դաստիարակության նպատակի, խնդիրների, իրականացման ձևերի, բովանդակության մասին խարսխված են հումանիստական մոտեցումների վրա:

**Հետազոտության տեսական նշանակությունը**

Հետազոտության տեսական նշանակությունը բացատրվում է Վեհափառի մանկավարժական տեսակետները պատմության նորագույն շրջանի լուսի տակ նորովի արժևորելու, ներկայացնելու հանգամանքով: Դրանում հատկապես կարևորվել են սփյուռքում գործող դպրոցներում հայ մանկավարժի գործունեության մեկնությունը, խոչընդոտները, դժվարությունները, ինչպես նաև ժամանակին Մայր Հայրենիքում աթեիստական գաղափարախոսության պայմաններում հոգևորական-մանկավարժի գործունեության մեջ աստվածաբանական, կրոնական դաստիարակության հարցերի անդրադարձը, դրանց ունեցած ազգապահպան դերն ու նշանակությունը սերունդ կրթելու և դաստիարակելու գործում: Վեհափառի մանկավարժական բազմասպարեզ գործունեության ուսումնասիրությունը թույլ է տվել հստակ պատկերացում կազմել իր ժամանակի ուսուցման և դաստիարակության բովանդակության, կրթության կազմակերպման ձևերի մասին թե՛ սփյուռքում և թե՛ Մայր հայրենիքում:

**Հետազոտության գործնական նշանակությունը**

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է հայ մանկավարժական մտքի պատմությունը ևս մի մանկավարժի հարուստ կերպարով հարստացնելու հանգամանքով:

Ատենախոսության նյութերը կարող են ներառվել բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդվող «Հայ մանկավարժության պատմություն» դասընթացի բովանդակության մեջ:

**Հետազոտության մեթոդները**

Մեր առջև դրած նպատակի բացահայտման և լիարժեք ներկայացման համար կիրառվել են գիտական հետազոտության մեթոդներ, որոնցից հատկապես կարևորվել են պատմահամեմատական, վերլուծության, համադրման, ընդհանրացման, համեմատության մեթոդները:

**Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը**

Հետազոտության տեսական ու գործնական դրույթների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են նաև

շարունակում են վերոթվարկյալ դասագրքերը՝ կիրառելի օրինակի մեջ սովորողին ցույց տալով առաջ քաշած գաղափարի ճշմարտացիությունը:

Հոգեբանության դասագրքի խոր վերլուծությունը խոսում ասպացույցն է այն մտքի, որ Վեհափառ Հայրը, ճանաչելով մանկավարժական գործընթացի մեջ ներգրավված սուբյեկտների հոգեբանական տիպերն ու հոգեկան հնարավորությունները, կարողացել է բացահայտել արդյունավետ փոխազդեցության ուղիները:

Տրամաբանության դասագիրը սերտորեն կապված է քարոզխոսության և հոգեբանության դասագրքերին: Ապագա հոգևորականի կյանքում քահանայագործության շրջանն ուղեկցվում է հավատացյալների հետ ամենօրյա հաղորդակցվելով: Ուստի Վեհափառը, հատուկ կարևորելով այս հանգամանքը, գտնում է, որ քահանան ևս ուսուցչի նման պետք է կարողանա սովորեցնել հավատացյալին հոգևոր արժեքներով իր կյանքը բարեփոխելու և հարստացնելու արվեստը:

Քարոզխոսության դասագրքում նա հիմնավորում է այն միտքը, թե խոսքի արժեքը գիտակցած քահանան անհուն բարձունքների կարող է հասնել՝ վերափոխելով մարդկանց կյանքը, լինելով նրանց հոգևոր աշխարհի շինարարն ու ճարտարապետը: Իսկ խոսքից օգտվելու մշակույթի մասին դասագրքում արված են աքսենոմատիկ ձևակերպումներ, որոնք իրենց կիրառական դրսևորումներն են ստացել նրա քարոզներում:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մանկավարժական գաղափարներում բացառիկ կարևորություն ունեն հատկապես դաստիարակության մասին մտքերը, որոնք ժամանակակից հնչեղություն ունեն նաև մեր օրերում:

Ատենախոսության **չորրորդ գլուխը**, որը վերնագրված է **«Դաստիարակության հիմնահարցերը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մանկավարժական մոտեցումներում»**, իր երեք ենթագլուխներով փաստում ու հաստատում է այն միտքը, թե գործ ունենք մեծ հումանիստ մանկավարժի հետ, ով կարողացել է առաջադեմ մտքեր արտահայտել դաստիարակության բնույթի, նրա նպատակների, կազմակերպման ձևերի մասին:

Չորրորդ գլխի **առաջին ենթագլուխը** վերնագրված է **«Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը անձի ձևավորման մասին»**, որտեղ վերլուծված են անձի ձևավորման հիմքում եղած գործոնների՝ ժառանգականության, դաստիարակության, միջավայրի ունեցած ազդեցությունների մասին Վեհափառի տեսակետները: Պետք է կարևորել, որ դրանք Վեհափառի կողմից հիմնավորված են գիտական տարբեր տեսությունների հարադրումներով, համեմատություններով, որոնք է՛լ ավելի արժեքավոր են դարձնում նրա արտահայտած գաղափարները:


**Երկրորդ ենթագլուխը** հիմնարար գաղափարներ է պարունակում դաստիարակության տարբեր ճյուղերի մասին և վերնագրված է



Առաջին ենթազխում վերլուծվել է Կ. Պալճյանի կողմից առաջարկված երեխայի տարիքային շրջաբաժանման մոդելը, որտեղ նա, պատճառաբանելով և հիմնավորելով իր տեսակետները, դիտարկել է նաև իր ժամանակի խնդիրների դաշտում անձի ձևավորման և զարգացման հիմնահարցեր:

Երեխայի տարիքային շրջաբաժանման Կ. Պալճյանի մոդելը ներկայացված է գծապատկեր 6-ում:

**ԳԾ. 6 ՏԱՐԻՔԱՅԻՆ ԵՐՋԱԲԱՇԱՆՈՒՄՆ ԸՍՏ ԿԱՐԱՊԵՏ ՊԱՆՃՅԱՆԻ**



**Երկրորդ ենթազխի վերնագիրն է՝ «Մայրենի լեզվի ուսուցման հարցերը Վազգեն Առաջին Կաթողիկոսի աշխատություններում»:**

Երկրորդ ենթազխում վերլուծված են Վեհափառի կողմից լեզվի պահպանմանն ուղղված գործողությունները, քննադատական մտքերը, մայրենի լեզվի մասին քարոզներում և կոնդակներում հնչեցրած մանկավարժական մեծ նշանակություն ունեցող գաղափարները:

**Երրորդ ենթազխի վերնագիրն է «Վեհափառ Վազգեն Առաջինի հոգեբանության, տրամաբանության, քարոզխոսության ուսումնական ծրագրերն ու դասագրքերը»:** Այս ենթազխում Նորին Սրբությունը ներկայացված է ոչ միայն որպես գործող դասախոս, այլև հմուտ մեթոդիստ, որի հեղինակությամբ ճեմարանականների համար գրվել են հոգեբանության, տրամաբանության, քարոզխոսության դասագրքեր, բարեփոխվել են աստվածաբանական առարկաների ծրագրեր:

Երրորդ ենթազխում դասագրքերի մանրամասն վերլուծությանը զուգահեռ՝ հնարավորինս հանգամանորեն վերլուծված է Վեհափառի քարոզների կրթադաստիարակչական նշանակությունը, որոնք կարծես թե

հրատարակված հոդվածների քանակով, հետազոտության արդյունքների քննարկումներով ու ելույթներով:

**Հետազոտության կատարման փուլերը**

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝

**Առաջին փուլում /2011-2012թթ./** կատարվել է Ամենայն Չայոց Չայրապետի՝ Վազգեն Առաջինի, աշխատությունների, նրա աշխարհիկ և հոգևոր գործունեությանը վերաբերող գրականության, արխիվային փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծություն:

**Երկրորդ փուլում /2012-2013թթ./** իրականացվել է թեմային առնչվող մանկավարժական, փիլիսոփայական, հոգեբանական, աստվածաբանական գրականության ուսումնասիրում:

**Երրորդ փուլում /2013-2014թթ./** ուսումնասիրությունների արդյունքում վերլուծության, համադրման և ընդհանրացման հիման վրա աշխատանքի ամբողջական շարադրում:

**Հետազոտության արդյունքները և եզրակացությունները**

Հետազոտության արդյունքները և եզրակացությունները ներկայացվել և քննարկվել են ԵՊՀ մանկավարժության ամբիոնի գիտատեսական սեմինարներում, մի շարք գիտաժողովներում: Ամբողջական աշխատանքը քննարկվել է ԵՊՀ մանկավարժության ամբիոնում: Ատենախոսության թեմայի վերաբերյալ հրատարակված է 6 հոդված:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը**

Ատենախոսությունը ներկայացված է համակարգչային 194 էջ ծավալով: Այն բաղկացած է ներածությունից, 4 գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից /119 անուն գիրք, 42 հանդես, 43 արխիվային նյութեր/Չայաստանի ազգային արխիվ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվ, Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարան/, 8 համացանցային աղբյուր/, ծավալուն հավելվածներից, ծանոթությունից:

Ատենախոսության տեքստը պարունակում է 38 նկար, 9 գծապատկեր:

**ԱՆԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**Ներածությունում** հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, վարկածը, խնդիրները, մատնանշվել են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, հետազոտության արդյունքների հավաստիությունը և

հիմնավորվածությունը, հետազոտության կատարման փուլերը, արդյունքներն ու եզրակացությունները, ծավալն ու կառուցվածքը:

Ատենախոսության առաջին զլուխը՝ վերնագրված **«ԼԼՈՆ-Կարապետ Պալճյանի՝ նույն ինքը՝ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Առաջինի կյանքն ու հասարակական գործունեությունը»**, բացահայտում է մանկավարժ կաթողիկոսի անցած կյանքի ուղին, որի տարբեր փուլերի մանրամասն մեկնաբանությունն ու վերլուծությունը ներառում են գլխի 4 ենթազլուխները:

**Առաջին ենթազլուխում**, որի վերնագիրն է **«Ռումինահայ գաղթօջախը 19-րդ դարի երկրորդ և 20-րդ դարի առաջին կեսերին»**, ներկայացված և վերլուծված են գաղթօջախի կյանքը հիշյալ ժամանակաշրջանում և գաղթօջախում Կ. Պալճյանի հասարակական, հետազայում նաև հոգևոր գործունեության ընթացքը:

Ենթազլուխում վերլուծվում են 19-րդ դարի երկրորդ և 20-րդ դարի առաջին կեսերին ռումինահայ գաղթօջախի ձևավորման պատճառները. դեռևս 12-րդ դարում Բագրատունյաց թագավորության անկումից հետո գաղթած անեցիներից կազմված ռումինահայ գաղթօջախի դիմագիծը փոփոխություններ է կրում՝ համիոյան ջարդերից տարագիր հայերով համալրվելուց հետո: Հայերի արտագաղթը վերաթարմացնում է ուժացման վտանգի առաջ կանգնած Ռումինիայի հայկական գաղթօջախում հայկականության շունչը:

19-րդ դարավերջում, առավելապես 20-րդ դարի սկզբին հին գաղթօջախի շերտի վրա կառուցվում է նորը, որի ձևավորման պատճառները խնդիրների պատմականորեն դաժան զուգահիսյությամբ նույնն էին՝ պետականության կորուստ, տեղահանություն, ջարդեր:

Հենց այս գաղթօջախն էլ համայն հայ ժողովրդին նվիրեց Լուսավորչի Գահի արժանավոր ժառանգորդ, հայրենասեր ու հայրենաշունչ 130-րդ Գահակալին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինին:


**Երկրորդ ենթազլուխում, որը վերնագրված է «ԼԼՈՆ-Կարապետ Պալճյանի կյանքն ու հասարակական գործունեությունը Ռումինիայի հայկական գաղթօջախում»**, համակողմանիորեն վերլուծված են Վազգեն Առաջինի կյանքի աշխարհիկ շրջանը, նրա հարուստ գործունեությունը գաղթօջախի կյանքի բարեփոխումների ուղղությամբ: Այս ենթազլուխում ներկայացված են երիտասարդ Կ. Պալճյանի համալսարանական կյանքին զուգընթաց վարած հասարակական գործունեությունը տեղի ուսանողական, ինչպես նաև՝ սկաուտական, մարմնակրթական միություններում: Այս ենթազլուխում են բացահայտվում 19-ամյա երիտասարդի մանկավարժական նկրտումները, նրա մուտքը «Միսաքյան-Քեսիմյան» ազգային վարժարան՝ նախ որպես կազմակերպիչ, իսկ այնուհետև՝ ուսուցիչ:

Աշխարհիկից հոգևոր շրջանի անցման պատճառի, գաղթօջախի կյանքում ԼԼՈՆ-Կարապետ Պալճյանի ունեցած դերի և նշանակության

**ԳԾ. 4. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ԳՏԱԾ ՈՒՄՈՒՅՄԱՆ ՍԿԶՐՈՒՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**



**ԳԾ. 5 ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ԳՏԱԾ ՈՒՄՈՒՅՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ**




**Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի դիդակտիկական հայացքները» խորագրով, բաղկացած է երեք ենթագլխից, որոնցից առաջինը վերնագրված է՝ «Վեհափառ Վազգեն Առաջինը ուսուցման հոգեբանա-մանկավարժական հիմքերի մասին»:**

Այս գլխում վերլուծված են կրթության նպատակի, դրան հասնելուն ուղղված քայլերի մասին Վեհափառ Հայրապետի պատկերացումները, որտեղ նա մանկավարժական գործընթացի հիմքում դնում է հոգեբանական և մանկավարժական գիտելիքները, ուսուցման սկզբունքների և մեթոդների իմացությունը և տեղին ու ժամանակին կիրառությունը:

Գծապատկեր 3-ում տրված են Վազգեն Առաջինի կողմից ներկայացված մանկավարժական գործընթացի կազմակերպման հիմքերը:

**ԳԾ. 3. ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**



Իր մանկավարժական գործունեության բոլոր փուլերում Վեհափառը դրսևորել է ուսուցման սկզբունքների և մեթոդների փայլուն իմացություն, այդ են վկայում դրանց ներդաշնակ և արդյունավետ կիրառության արդյունքները: Նրա կողմից մեծ կարևորություն է տրվել ուսուցման բոլոր սկզբունքներին, դրանց համապատասխան ընտրված ուսուցման մեթոդներին, որոնք ներկայացված են գծապատկեր 4-ում և 5-ում:

բացահայտմանն ու վերլուծությանն է ուղղված «**Լևոն-Կարապետ Պալճյանի հոգևոր գործունեության ընթացքը Ռումինիայի հայկական գաղթօջախում» երրորդ ենթագլուխը**, որտեղ երևում է խոստումնալից ապագայով մանկավարժ-հոգևորականը, նրա հոգևոր աճն ու տեղի գաղթօջախի ազգային վարժարանի, ինչպես նաև եկեղեցու հեղինակության բարձրացմանը միտված գործունե ջանքերը:

1943թ.-ին, զարմանալի զուգահիսությամբ ճիշտ իր ծննդյան օրը՝ սեպտեմբերի 20-ին, վարդապետ ձեռնադրվելու նպատակով Աթենք ուղևորվող Կ. Պալճյանը վերադառնում է այնտեղից՝ վերանվանված Վազգեն՝ առաջարկությամբ ռումինահայ թեմի խորհրդի անդամ, կնքահայր Ռուբեն Իրայեյանի՝ ի հիշատակ հայրուկապետ Վազգեն Տերունյանի: Իսկ որոշ ժամանակ անց Ս. Վազգենին է վստահվում ռումինահայ թեմի առաջնորդությունը:

Այս ենթագլխում մանրամասն ներկայացված է նրա ազգասեր գործունեությունը տեղի գաղթօջախի կյանքում, որը ժամանակին մեծ ուշադրության և դրվատանքի է արժանանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ Չորեքյանի կողմից:

1948թ.-ի մայիսի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մայր տաճարում Ս. Իջման սեղանի առջև Գևորգ Զ Չորեքյանի կաթողիկոսական օրհնությամբ, որ եզակի դեպք էր աստվածամերժ ժամանակներ հաղթահարող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ս. Վազգենին շնորհվում են Ծայրագույն վարդապետի տասը աստիճանները՝ ի նշան և հավանություն սփյուռքում նրա ազգանպաստ գործունեության, իսկ 1951թ.-ի ապրիլի 27-ին Ս. Վազգենը Հայոց Հայրապետ Գևորգ Զ Չորեքյանի օրհնածիր աջով եպիսկոպոս է ձեռնադրվում՝ շարունակելով իր հայրենաշեն գործունեությունը և՛ Ռումինիայի, և՛ Բուլղարիայի հայկական գաղթօջախներում:


Երրորդ ենթագլուխն ամբողջացնում է Վազգեն Առաջինի մինչև հայրապետական շրջանի գործունեությունը սփյուռքում:

**Չորրորդ ենթագլուխը** վերնագրված է «**Հայաստանում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի ազգապահպան հոգևոր գործունեությունը**», որտեղ ներկայացված են Հայոց Հայրապետի հայրենաշինության, ազգային արժեքների պահպանման ու ստեղծման ջանքերը թե՛ Մայր Հայաստանում, թե՛ սփյուռքում, նրա ունեցած դերն ու նշանակությունը հատկապես պետականաշինության ընթացքում: Այս ենթագլխում վերլուծված է 1955թ.-ի սեպտեմբերի 30-ին Մայր Աթոռում «ըստ կարգաց և կանոնաց Հայաստանյայց եկեղեցու» Ամենայն Հայոց 130-րդ կաթողիկոս ընտրված Վազգեն Ա Պալճյանի՝ հայ առաքելական եկեղեցու միջոցով իր ազգին ծառայելու արժանապատիվ առաքելությունը:

Մանկավարժության տեսանկյունից հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում **երկրորդ գլուխը՝ վերնագրված «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի մանկավարժական հայացքների ձևավորման**

**Ուսխաղդյալները**, որը բաղկացած է երեք ենթագլխից: Այս գլխում վերլուծված է կաթողիկոսի մինչհայրապետական և հայրապետական շրջանի մանկավարժական գործունեությունը, որի ընթացքը սկսվել է 19 տարեկանում և շարունակվել մինչև երկրային կյանքի ավարտը: Վազգեն Առաջինի մանկավարժական գործունեության փուլերը և ոլորտները ներկայացված են գծապատկեր 1-ում:

**ԳՑ. 1 ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈԽԵՐԸ ԵՎ ՈԼՈՐՏՆԵՐԸ**



Շնորհաբույր հայրապետի մանկավարժական գործունեությունն իր եական նշանակությունն է ունեցել ռուսինահայ գաղթաբախի «Միասնաբնակայան» ազգային վարժարանի կյանքում, որտեղ նա դասավանդել է ռուսիներեն, հայերեն, ֆիզկուլտուրա, տոմարակալություն, աշխարհագրություն /բնագիտություն/: **Այդ մասին է երկրորդ գլխի առաջին ենթագլուխը՝ «Լևոն-Կարապետ Պալճյանի մանկավարժական գործունեությունը ռուսինահայ գաղթաբախում» վերնագրով:** Ենթագլխում օգտագործված են կարևոր արխիվային նյութեր, վավերագրեր, հիշատակություններ, որոնք օգնում են բացահայտելու երիտասարդ Կ. Պալճյանին իբրև մանկավարժական հարուստ գիտելիքներով, երեխաներին սիրելու և նրանց հետ ուսումնադաստիարակչական աշխատանքներ կազմակերպելու մանկավարժական վարպետությամբ օժտված ուսուցիչ:

Երիտասարդ ուսուցիչ՝ Կ. Պալճյանի մանկավարժական միտքն իր դրսևորումներն է ստացել նաև հրապարակախոսության մեջ, որտեղ նա բարձրաձայնել է այնպիսի կարևոր մանկավարժական խնդիրների մասին, ինչպիսիք են՝ դաստիարակության գործի կազմակերպումն ու իրականացումը, նրա հումանիստական բնույթը՝ ասելիքին տալով երկխոսության բնույթ՝ ընթերցողի և մանկավարժ-լրագրողի միջև:

Հրապարակախոսական նյութերում մանկավարժական խնդիրներին ապագա Վեհափառի անդրադարձները տեղ են գտել **երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝** վերնագրված «Լևոն Կարապետ Պալճյանի մանկավարժական մտքերը հրապարակախոսության մեջ»:

«Մարտկոց»/Ֆրանսիա/, «Արագ»/Բուխարեստ/, «Պահակ»/Բուխարեստ/ պարբերականներում նրա հոդվածները քննում են երիտասարդ ու ավագ սերնդի միջև ծագող կոնֆլիկտների պատճառները, ուղենշում ներդաշնակ հարաբերությունների կազմակերպման ճանապարհներ, բացահայտում ծնող-երեխա միջանձնային հարաբերությունների բարդ կառուցվածքը, լուսաբանում ստվերում մնացած հոգեբանամանկավարժական հարցեր, հաղորդում միջանձնային ներդաշնակ հարաբերություններ կարգավորելու համար անհրաժեշտ գիտելիքներ:

Նրա հրապարակախոսական մտքի արգասիքն էր նաև «Հերկ» ամսատետրակը, որի 12 համարներում Կ. Պալճյանն առաջ է քաշում առաջադեմ գաղափարներ անձի ձևավորման, զարգացման, դաստիարակության մասին:

Սակայն Վազգեն Առաջինի մանկավարժական գործունեության մեծ դրսևորումները թե՛ որպես դասախոսի, թե՛ մեթոդիստի, թե՛ ուսումնական գործընթացի կազմակերպչի, տեսնում ենք Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, որտեղ տարիներ շարունակ դասախոսել է Մեծն Վեհափառը:

**«Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը Գևորգյան Հոգևոր ճեմարանի ուսուցչապետ և դասախոս» ենթագլխում** ներկայացվում են Վեհափառի դասախոսական բարձրակարգ աշխատանքը, դասագրքաստեղծ գործունեությունը, նրա բարեփոխումների ծրագրերը հոգևոր գիշերօթիկ կրթոջախում իբրև ուսուցչապետ:

Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում Վազգեն Առաջինի մանկավարժական գործունեության ձևերն ընդգրկում են ներկայացված են գծապատկեր 2-ում:

**ԳՑ. 2 ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԵՎԵՐԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ**

